քիլվարեցւոց և խաչմասեցւոց լեզուն յայտնի խառնուրդ է հրէականի ընդ պարսկականին։

Թէ այսպէս և թէ այնպէս փառք Աստուծոյ, որ այնքան հալածանաց և նեղութեանց տանելով ու համբերելով խեղճ մարդիկը, հայ քրիստոնեայ են մնացել, և այսօր մեր եկեղեցւոյ հարազատ որդիքն են։

Այս Խաչմասից 10-ն վերստ հեռի է հին Խաչմասը՝ որ աւերակ է. միայն ընդարձակ դերեզմանատունը կայ անտառի մէջ, որ դեռ չէ հետազօտած, և այս հին Խաչմասը իւր պըտղաբեր հողոմն ու առատ ջրոմն սեպհական կալուած է մեր ազնիւ բարեկամ մեծապատիւ պարոն Ներսէս Ցէր Անդրէասեան Սարուխանեանցին բազուեցւոյ, որը և աշխատում էր բանի տուն հայեր բնակեցնել հին Խաչմասում և նորոգել գիւղը։ Կայ Խաչմաս անունով գիւղ և Նուխի գաւառի Ղապալա գաւառակում (Կապաղակ), բայց թէ որ Խաչմասն է յառաջ շինուած, դեռ չէ ստուգուած։

ՄԱԴՐԱՍԱՅ

Երրորդ թաթախօս գիւղն է Մադրասայ, որ Ջամախի քաղաքից 5-6 վերստ հեռու լինելով՝ և 5-6000 տան չափ զուտ հայ քրիստոնեայ ժողովուրդ ունելով՝ մի գիւղաքաղաքի նմանութիւն ունի, ըստ որում բնակիչներից մի մասն առեւտրական լինելով և քաղաքներ տեսնելով՝ աշխատում են քաղաքացի լինել և քաղաքավարի վարուել. ուստի և շատերը ունին գիւղումն կրպակներ և գինու գործարաններ։

Մադրասան ունի սրբատաշ քարով շինուած զմբէթազարդ պատուական եկեղեցի յանուն սուրբ Աստուածածնի, որ կառուցած է յամի 1860, յատուկ հսկողութեամբ և աշխատութեամբ մադրասեցի Խաչատուր Օվչի—Նաւասի, այն է թոռն որսորդի, և օղնականաց Նորա Սարգսի Գօնդարեանց և Զա-